GEFF Green Economy Financing Facility

European Bank for Reconstruction and Development

ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Զարգացնում եք Ձեր բիզնեսը, արտադրում կամ վաճառում բարձր արդյունավետության տեխնոլոգիաներ, GEFF-ի միջոցով շահում եք թե՛ Դուք, և թե՛ տնտեսությունը

Դոնորներ՝

GREEN CLIMATE FUND

CIF CLIMATE INVESTMENT FUNDS

ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՄԱՆԱԼ GEFF-Ի ՄԱՍԻՆ

- GEFF-ը Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) կողմից մշակված մի ծրագիր է, որից շահում են տնտեսությունը, շրջակա միջավայրը, բիզնեսներն ու տնային տնտեսությունները:
- Այն գործում է աշխարհի 27 երկրների 155 գործընկեր ֆինանսական կազմակերպությունների (ԳՖԿ) միջոցով և ներառում է ՎԶԵԲ-ի ավելի քան 5 մլրդ եվրո ֆինանսավորում:
- GEFF-ի կողմից ֆինանսավորված ավելի քան 202,000 ներդրումների արդյունքում տարեկան կրճատվում է ավելի քան 9 մլն տոննա ածխաթթու գազի արտանետում:
- Բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաների վարգացումը հանգեցնում է կանաչ ներդրումների նկատմամբ պահանջարկի աճին, որոնք և ֆինանսավորվում են GEFF-ի կողմից:

ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Բիզնեսների համար

- էներգիայի, ջրի և այլ ռեսուրսների սպառման կրճատում, և համապատասխանաբար՝ ծախսերի նվազում
- սարքավորումների արտադրողականության ու հուսալիության ավելացում
- արտադրանքի որակի և բիզնեսի հեղինակության բարելավում
- բարցր եկամտաբերություն և մրցունակություն

Մատակարարների համար

- էներգաարդյունավետ ու վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների վաճառքների ու արտադրության աճ, արդյունքում՝ բարցր շրջանառություն

Շրջակա միջավայրի համար

- կարևորագույն բնական պաշարների պահպանում
- աղտոտվածության նվազում
- ավելի առողջ շրջակա միջավայր:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԳՈՐԾՈՒՄ GEFF-Ը

Հայաստանում GEFF-ը տրամադրում է ֆինանսավորում, խորհրդատվություն և խրախուսական գումարներ՝ օգնելով բիզնեսներին դառնալ առավել մրցունակ կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաները:

GEFF-ը դյուրացրել է կանաչ ֆինանսավորման գործընթացը՝ ներդնելով **կանաչ տեխնոլոգիաների ցանկ** առցանց գործիքը, որի օգնությամբ կարելի է ընտրել բարձր արդյունավետության տեխնոլոգիաներ: Այն հանդիսանում է նախապես հաստատված սարքավորումների և նյութերի կատալոգ, որոնք համապատասխանում են ծրագրի սահմանած նվազագույն պահանջներին:

ՁԵՐ ԿԱՆԱՉ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ GEFF-Ն ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԵՐԿՈՒ ՄՈՏԵՑՈՒՄ

Նախապես հաստատված ներդրումներ

Ցանկում ներառված բոլոր տեխնոլոգիաներն ենթակա են GEFF-ի ֆինանսավորմանը՝ առանց հետագա տեխնիկական հաստատման անհրաժեշտության: Այդպիսի ընդունելի տեխնոլոգիաները ներառում են՝

- դռներ և պատուհաններ
- կաթսաներ և հովացուցիչներ
- ջերմամեկուսիչներ
- լուսավորման համակարգեր
- շարժիչներ, պոմպեր, ջերմային պոմպեր
- էներգիայի և համակցված էներգիայի արտադրություն
- արդյունաբերական տեխնոլոգիաներ
- տրանսպորտային միջոցներ:

Գնահատվող ներդրումներ՝ անվճար տեխնիկական խորհրդատվությամբ

Որոշ կանաչ ներդրումներ կարող են ավելի շահեկան դառնալ յուրահատուկ լուծումների կիրառման շնորհիվ, որոնք ակնհայտ չեն վերը նշված «Նախապես հաստատված ներդրումների» պարագայում: Նման դեպքերում, GEFF-ի խորհրդատուների թիմը ներդրումային ծրագրի տարբեր փուլերում տրամադրում է խորհրդատվություն՝ ապահովելով ինչպես առաջարկվող ներդրման տեխնիկական համապատասխանությունը GEFF-ի պահանջներին, այնպես էլ կանաչ տեխնոլոգիաների և ծառայությունների ֆինանսավորումը GEFF-ի միջոցներով:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՑԱՆԿԻՑ ՕԳՏՎԵԼԸ

I. **Սահմանե՛ք** Ձեր ներդրման պահանջը

II. **Ընտրե՛ք** համապատասխան ապրանքը **Կանաչ տեխնոլոգիաների ցանկից** **techselector.com/armenia**

III. **Ստացե՛ք GEFF-ի ֆինանսավորումը** գործընկեր ֆինանսական հաստատությունից (ԳՖԿ)

IV. **Ձեռք բերե՛ք** տեխնոլոգիան վաճառողից կամ արտադրողից

V. **Օգտվե՛ք** էներգայի խնայողությունից և երկարաժամկետ ֆինանսական օգուտներից:

ԳՈՐԾԸՆԿԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամբողջական ցանկը հրապարակված է **enbrdgeff.com/armenia/am/financing** կայքում:

«Էներգաարդյունավետությունը նվազեցնում է արտադրական ծախսերը, բարցրացնում մրցունակությունը, աջակցում է էներգետիկ անվտանգությանը և նվազեցնում CO_2 արտանետումները յուրաքանչյուր արտադրանքի միավորի համար: Այն չափազանց կարևոր է ոչ միայն էներգետիկայի ոլորտի, այլև ողջ երկրի տնտեսության համար»:

ՎԶԵԲ-ի էներգիայի ռազմավարություն

Միրով պատրաստ ենք պատասխանել Ձեր բոլոր հարցերին:

GEFF-ը Հայաստանում
ՀՀ, ք. Երևան | Հանրապետության 62 փողոց, բն. 101
armenia@ebrdgeff.com | +374 10 542 721 | www.ebrdgeff.com/armenia